«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«21» 07 2014թ.

Հաստատում եմ
Գնումների աջակցման կենտրոնի պետի ժ/պ
_____ Հ. Թունյան

Ն ԳԲԽ 25/14 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ու Թ Յ Ու Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. Ն 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից 04.07.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Կոմպասս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 23.04.2014թ. համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգը տեղի է

ունեցել օրենքի խախտումով, մասնավորապես՝ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասը և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 109-րդ կետի 2-րդ ենթակետը:

«Կոմպասս» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ 29.04.2014թ. www.armeps.am կայքում վերոհիշյալ ընթացակարգի վերաբերյալ հրապարակվել է պարզաբանում, որտեղ փոփոխության է ենթարկվել պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագիրը: Բողոքում Ընկերությունը թվարկել է հրավերի և պարզաբանման մեջ հրապարակված պահանջվող սարքավորման տեխնիկական բնութագրերի էական տարբերությունները: Մասնավորապես.

- Հրավերով պահանջվել է տեսապրոեկտոր SONY VPL-CX235, իսկ տրված պարզաբանմամբ այն այլևս չի պահանջվել.
- Հրավերով պահանջվել է կոնտրաստ՝ 5300.1, իսկ տրված պարզաբանմամբ պահանջվել է կոնտրաստ՝ 3000.1.
- Հրավերով պահանջվել է լամպի երաշխիքային ժամկետ՝ 3000ժ. (Eco), 2000ժ (Normal), իսկ տրված պարզաբանմամբ այն այլևս չի պահանջվել.
- Հրավերով պահանջվել է կետայնություն՝ 786.432 (1024 X 768), իսկ տրված պարզաբանմամբ պահանջվել է (1920 X 1080),
- Հրավերով պահանջվել է ներդրված բարձրախոսներ՝ 2 x 10 վտ, իսկ տրված պարզաբանմամբ պահանջվել է ներդրված բարձրախոս՝ 10 վտ,
- Հրավերով չի պահանջվել 1x15 RS-232C control/service/input/output/, իսկ տրված պարզաբանմամբ այդ պահանջը սահմանվել է:

«Կոմպասս» ՍՊԸ-ն հայտնել է, որ հրավերի և պարզաբանման մեջ հրապարակված տեխնիկական բնութագրերը էապես տարբերվում են միմյանցից և հետևաբար ենթադրվում է էապես տարբեր սարքավորումներ, ուստի պարզաբանումը պետք է դիտարկել որպես հայտով պահանջվող սարքավորման տեխնիկական բնութագրերի փոփոխություն, քանի որ պարզաբանման մեջ առկա էր տեխնիկական բնութագրի փոփոխություն, անհրաժեշտ էր փոփոխությունը կատարել օրենքով սահմանված կարգով, փոխել ընթացակարգի անցկացման ժամկետը՝ հաշվարկելով 29.04.2014թ. կամ սահմանել նոր հրավեր՝ ներառելով 29.04.2014թ. հրապարակված փոփոխությունները, ինչը տեղի չի ունեցել:

«Կոմպասս» ՍՊԸ-ն խնդրել է չեղյալ հայտարարել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգը:

2. ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 07.07.2014թ. N 04/032-1183 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 04.07.2014թ. «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 16.07.2014թ. N ԴՎԱ/1986 գրությամբ «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը հրապարակված են գնումների պաշտոնական տեղեկագրում և www.armeps.am էլեկտրոնային կայքում:

Ուսումնասիրելով «Կոմպասս» ՍՊԸ-ի բողոքը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ ի պատասխան «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի պարզաբանում ներկայացնելու պահանջի՝ գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել և 29.04.2014թ. հրապարակել է պարզաբանում: Պարզաբանումը, ըստ էության, հստակեցնում էր ապրանքի տեխնիկական բնութագիրը և բացառում էր դրա այլընտրանքային մեկնաբանությունը: Տրամաբանական կլիներ, եթե «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից տվյալ հարցը բարձրացվեր պարզաբանման հրապարակումից, այլ ոչ թե ընթացակարգը ավարտելուց հետո: Իսկ ինչ վերաբերվում է հայտերի ներկայացման ժամկետը երկարաձգելուն, ապա ընթացակարգի հրավերում, որպես այդպիսին, փոփոխություն չի կատարվել, ուստի և ժամկետը չի երկարաձգվել:

ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ քանի որ որպես հայտերի բացման ժամկետ սահմանված էր 07.05.2014թ., և հայտ ներկայացնելու

համար կար շուրջ ութ օր, ուստի մասնակիցը լիարժեք հնարավորություն ուներ՝ հայտը պարզաբանման համապատասխան ներկայացնելու համար և նշված հիմքով ընթացակարգը չի կարող չեղյալ հայտարարվել:

3. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն 09.07.2014թ. N 1/10-07-09 գրությամբ հայտնել է, որ ուսումնասիրելով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ «Կոմպասս» ՍՊԸ-ի ս.թ. հուլիսի 4-ին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը, ներկայացրել է իր առարկությունները:

Մասնավորապես «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն նշել է, որ «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից բողոքը հայտարարվել է որպես ս.թ. հուլիսի 4-ին ներկայացված բողոք, սակայն «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի ընդհանուր բաժնի դրոշմած կնիքից երևում է, որ բողոքը 5272-2 համարի տակ մուտքագրվել է 2014թ. մայիսի 9-ին:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հայտնել է, որ «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից վկայակոչված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ «Հրավերի պարզաբանումը և դրանում փոփոխություններ կատարելը» 5-րդ մասն ուղղակիորեն վերաբերվում է բաց ընթացակարգին և ոչ մի առնչություն չունի շրջանակային համաձայնագրերով իրականացվող ընթացակարգի հետ:

Ըստ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի, արդյոք վերը նշված 26-րդ հոդվածի 5-րդ մասը վկայակոչելով՝ «Կոմպասս» ՍՊԸ-ն փորձ է կատարել բողոքը քննող հանձնաժողովին թյուրիմացության մեջ գցել, թե դա պարզապես հանդիսանում է բողոք բերող անձի իրավաբանական պատրաստվածության դրսևորում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսկիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի (կամ համարժեք) բառերը», հետևաբար պատվիրատուն, պարզաբանման մեջ չնշելով

«Տեսապրոեկտոր Sony VPL-CX235» բառերը, պարզապես կատարել է վերը նշված օրենսդրական ակտի պահանջները:

Բացի այդ, ըստ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի, «Կոմպասս» ՍՊԸ-ն որպես ՏՏ-վերավաճառող պետք է տեղյակ լիներ, թե թվային բիզնես պրոեկտորների աշխարհում ընդունված ֆունկցիոնալ դասակարգումից, թե ցանկացած թվային պրոեկտորի երկու հիմնական բնութագրից՝ պայծառությունից, լույսային հոսքից և ֆիզիկական ու ինտերպոլացված կետայնությունից: Ուստի գնահատող հանձնաժողովը, www.armeps.am կայքի միջոցով 29.04.2014թ. հրապարակելով պարզաբանում, չի կատարել պահանջվող սարքի բնութագրերում «էական» փոփոխություններ:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գտնում է, որ պահանջվող սարքավորման փոփոխություն տեղի չի ունեցել և պրոեկտորի փոխարեն, օրինակ՝ սառնարան չի պահանջվել, պահանջվել է նույն անփոփոխ, Desctop ֆունկցիոնալ դասի թվային պրոեկտոր, պահանջվել է նույն անփոփոխ պայծառություն (ոչ պակաս քան 4.000 ANSI Lumens) և նույնիսկ ընդլայնված կետայնությամբ (VGA (640 X 480) մինչև FULL HD (1.920 X 1.080) թվային պրոեկտոր:

«Ֆրիմա Ալֆա» ՍՊԸ-ն բողոքը քննող հանձնաժողովի ուշադրությանն է ներկայացրել համապատասխան համեմատական աղյուսակ (պատվիրատուի կողմից օգտագործված տերմինները թողնված են անփոփոխ):

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր	«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով տեխնիկական բնութագրի պարզաբանում
Պանել-LAN Control / LAN Display Micro Lens	Այս արտահայտության մեջ հավաքված են տեխնիկական առումով միմյանց հետ չկապակցված հասկացություններ-հանված է գնահատող հանձնաժողովի կողմից
3 Դ Պրոեկցիոն հեռավորությունը 0.69-7.23մ	Այս արտահայտության մեջ հավաքված են տեխնիկական առումով միմյանց հետ չկապակցված հասկացություններ-հանված է գնահատող հանձնաժողովի կողմից
Կետայնությունը-786.432 (1024 x 768)	Հիմնական թողունակությունը VGA (640 X 480)
-	Արտացոլման հնարավորությունը Full HD, էկրանի թույլտվությունը (1.920 X 1.080)
Լուսավորություն 4.000 ANSI Lumens ոչ	Լուսավորություն ոչ պակաս քան 4.000

պակաս	ANSI Lumens
Կոնտրաստ-5300.1 ոչ պակաս	Կոնտրաստը ոչ պակաս 3000:1
Լամպի երաշխիքային ժամկետը-3000ժ. (Eco), 2000ժ (Normal)	-
Պատկերի չափսը մինիմում-մաքսիմում-30-300 դույմ	-
Թույլատրվող համակարգ-NTSC, PAL, SECAM	Թույլատրվող համակարգ- PAL, NTSC, SECAM
HDTV Compatibility 480i, 480p, 576i, 576p, 720p, 1080i, 1080p	-
Ներդրված բարձրախոսներ 2x10վտ	Ներդրված բարձրախոսներ ոչ պակաս 10վտ հզորությամբ
Միացման տարբերակը (մուտք-ելք) -Analog RCB: D-sub 15 pin x 2 -USB Type A x 1 -HDMI v 1.3 x 1 -S-video: mini din 4 pin x 1 -Composite video: RCA x 1 microphone: stereo mini jack x 1 -Audio L/R: RCA x 2 stereo mini jack x 1	Պորտեր մուտք/ելք -2 x15 pin VGA video/input/ -1x15 pin VGA video/input/ -1xHDMI audio/video/ input/ -1x15 USB /input/ -1x1/8 /3.5mm/ Mini Audio/output/ -1x15 RS - 232 C control /service/input/output
Լամպ-300 W	-

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հայտնել է, որ ինչպես պարզ երևում է աղյուսակից, որևիցե փոփոխություն, որը, նույնիսկ մեծ ցանկության դեպքում, կարելի է անվանել «էական» (բացի կոնտրաստի գործակցից, որն ընդունված չափման միասնական մեթոդաբանության պատճառով, ամեն մի արտադրող չափում է իր ցանկացած ձևով), տեխնիկական բնութագրում չի կատարվել:

Համապատասխանաբար, ըստ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի, բացակայում է որևէ հիմք փոխելու ընթացակարգի անցկացման ժամկետը և համաձայն՝ «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից վկայակոչված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 109-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների՝ «հայտը ներկայացվում է ծանուցվելու օրվան հաջորդող օրվանից հաշված յոթ աշխատանքային օրվա ընթացքում», ինչը պատվիրատուի կողմից կատարվել է լիովին:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գտնում է, որ «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը լիովին անհիմն է, թե իրավաբանական, թե տեխնիկական տեսակետից, և միանշանակ ենթակա է մերժման:

4. ԳԲԽ-25/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-25/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ նաև Կենտրոն), ուսումնասիրելով «Կոմպասս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 04.07.2014թ. ներկայացված բողոքը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2014թ. կայացած նիստի N 3 արձանագրությունը, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 09.07.2014թ. N 1/10-07-09 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 16.07.2014թ. N ԴՎԱ/1986 գրությունը, հայտնում է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, հայտ են ներկայացրել նաև «Կոմպասս» ՍՊԸ-ն և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն:

Պատվիրատուի կողմից Ընթացակարգի Հրավերին կից տեխնիկական բնութագրով պահանջվել է տեսապրոեկտոր SONY VPL-CX235 3LCD BrightEra XGA Projector կամ համարժեք լրակազմ՝

- Պանել-Lan Control / LAN Display Micro Lens,
- Լամպ-300W,
- HDTV Compatibility 480i, 480p, 576i, 576p, 720p, 1080i, 1080p,
- Լուսավորություն 4000 ANSI Lumens ոչ պակաս,
- Լամպի երաշխիքային ժամկետը-3000ժ. (Eco), 2000ժ. (Normal),
- Կոնտրաստ-5300.1 ոչ պակաս,
- Կետայնությունը-786,432 (1024 X 768),
- Թույլատրվող համակարգ- NTSC, PAL, SECAM,

- 3 Դ պրոեկցիոն հեռավորությունը 0.69-7.23 մ
- Պատկերի չափսը մինիմում-մաքսիմում-30"-300" դույմ,
- Միացման տարբերակները (մուտք-ելք) - Analog RGB: D-sub 15 pin x 2, USB Type A x 1 HDMI v 1.3 x 1 S-video: mini din 4 pin x 1 Composite video: RCA x 1 microphone: stereo mini jack x 1 Audio L/R: RCA x 2 stereo mini jack x 1, ներդրված բարձրախոսներ 2 x 10 վտ,
- Ուժեղացուցիչի խորհուրդ տրվող հզորությամբ-10-80w,
- Հաճախականության դիապազոնը-AC 100 - 200 V, 50 - 60 Hz,
- Զգայություն-88db 2.8 V, 1 meter,
- Նոմինալ դիմադրությունը 8 ohms,
- Աուդիո-վիդեո մուտք ելք-compozit video 4 մուտք, S-Video 1 մուտք, Stereo Audio 7 մուտք, Phono 1 մուտք, subwoofer ելք 2 հատ, compozit video ելք 2 հատ, ականջակալի ելք 1 հատ, PreAmp ելք 1 հատ,
- VGA Ստանդարտի մալուխ,
- VGA ստանդարտի մալուխ նախատեսված տեսապրոեկտորը համակարգչին միացնելու համար՝ 10 մետր երկարությամբ,
- Բարձրախոսը միացնելու համար նախատեսված մալուխ՝ ցածր դիմադրությամբ, կտրվածքի տրամագիծը 2 մմ, երկարությունը՝ 10 մ:
- Ամրացվող հենակով Draper Rolleramic Motorized կամ համարժեք էլեկտրական պրոյեկցոն էկրան 120x90"՝ հեռակառավարման վահանակով, պրոյեկտորի պահպանիչ կեյսով,
- կախիչ 65 սմ՝ շարժական-կարգավորվող,
- Երաշխիքային սպասարկում 1 տարի, խոտանները վերացվում են տեղակայման վայրում՝ մատակարարի ուժերով:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն, ուսումնասիրելով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով հրավերը (ծանուցումը), ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, 25.04.2014թ. www.armeps.am կայքի միջոցով դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով ընթացակարգի հրավերի վերաբերյալ տալ պաշտոնական պարզաբանում:

Գնահատող հանձնաժողովը www.armeps.am կայքի միջոցով 29.04.2014թ. հրապարակել է վերը նշված պարզաբանման պատասխանը, որի համաձայն տեխնիկական բնութագրով պահանջվել է.

Հիմնական նկարագրություն՝

- Լուսավորություն՝ ոչ պակաս քան 4000 ANSI Lumens, /կարող է առաջարկվել է վերը նշված մոդելին համարժեք մոդել, ուստի լուսավորությունը պետք է լինի 4000-ից ոչ պակաս/,
- Արտացոլման հնարավորությունը՝ Full HD, էկրանի թույլտվությունը՝ (1920 x 1080),
- Թույլատրվող համակարգ-PAL, NTSC< SECAM,
- Կոնտրաստը՝ ոչ պակաս 3000:1,
- Հիմնական թողունակությունը՝ VGA 640 X 480,
- Ներդրված բարձրախոս՝ ոչ պակաս 10 վտ հզորությամբ,
- Պորտեր մուտք/ելք
- 2 x15 pin VGA video/input/
- 1x15 pin VGA video/input/
- 1xHDMI audio/video/ input/
- 1x15 USB /input/
- 1x1/8 /3.5mm/ Mini Audio/output/
- 1x15 RS - 232 C control /service/input/output

Լրակազմում՝

- VGA ստանդարտի մալուխ նախատեսված տեսապրոեկտորը համակարգչին միացնելու համար՝ ոչ պակաս 10 մ երկարությամբ: Բարձրախոսը միացնելու համար նախատեսված մալուխ՝ ցածր դիմադրությամբ, կտրվածքի տրամագիծը 2 մմ, երկարությունը՝ 10 մմ:
- Պատին ամրացվող հենակով Draper Rolleramic Motorized կամ համարժեք էլեկտրական պրոյեկցոն եկրան 120x90 չափսի՝ հեռակառավարման վահանակով, պրոեկտորի պահպանիչ կեյսով /կրելու համար արտաքին հարվածներից պաշտպանող պայուսակ/, առաստաղից կախելու համար կախիչ՝ 65 սմ երկարությամբ, գլխիկը՝ շարժական-կարգավորվող /պտտվող, թեքվող՝ տարբեր դիրքերով ֆիքսելու համար/:

Ողջ լրակազմին տրվում է 1 տարի երաշխիք, խոտանները վերացվում են տեղադրման վայրում՝ մատակարարի ուժերով /տեղադրումը կատարվում է ՀՀ ՊՆ և ՊԲ տարբեր զորամասերում/:

Այսպիսով, 29.04.2014թ. հրապարակված պարզաբանմամբ հրավերի տեխնիկական բնութագրում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- Հրավերով պահանջվել է տեսապրոեկտոր SONY VPL-CX235, իսկ տրված պարզաբանմամբ այն այլևս չի պահանջվել.
- Հրավերով պահանջվել է Պանել-LAN Control / LAN Display Micro Lens, իսկ տրված պարզաբանմամբ այն այլևս չի պահանջվել.
- Հրավերով պահանջվել է Լամպ-300 W, իսկ տրված պարզաբանմամբ այն այլևս չի պահանջվել.
- Հրավերով պահանջվել է HDTV Compatibility 480i, 480p, 576i, 576p, 720p, 1080i, 1080p, իսկ տրված պարզաբանմամբ այն այլևս չի պահանջվել.
- Հրավերով պահանջվել է լամպի երաշխիքային ժամկետ՝ 3000ժ. (Eco), 2000ժ (Normal), իսկ տրված պարզաբանմամբ այն այլևս չի պահանջվել.
- Հրավերով պահանջվել է կոնտրաստ՝ 5300.1, իսկ տրված պարզաբանմամբ պահանջվել է կոնտրաստ՝ 3000.1.
- Հրավերով պահանջվել է կետայնություն՝ 786.432 (1024 X 768), իսկ տրված պարզաբանմամբ պահանջվել է (1920 X 1080).
- Հրավերով պահանջվել է 3 Դ պրոեկցիոն հեռավորությունը 0.69-7.23մ, իսկ տրված պարզաբանմամբ այն այլևս չի պահանջվել.
- Հրավերով պահանջվել է պատկերի չափսը մինիմում-մաքսիմում-30-300 դույմ, իսկ տրված պարզաբանմամբ այն այլևս չի պահանջվել.
- Հրավերով պահանջվել են ներդրված բարձրախոսներ՝ 2 x 10 վտ, իսկ տրված պարզաբանմամբ պահանջվել է ներդրված բարձրախոս՝ 10 վտ.
- Հրավերով չի պահանջվել 1x15 RS-232C control/service/input/output/, իսկ տրված պարզաբանմամբ այդ պահանջը սահմանվել է:

Կենտրոնում՝ 2014 թվականի հուլիսի 18-ին, ժամը 15:00-ին կազմակերպված նիստին ԳԲԽ-25/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար Ռ. Մկրտչյանը հայտարարեց, որ Գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգի 8-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից քվորում չապահովվելու պատճառով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի նախաձեռնությամբ բողոքի վերաբերյալ կազմակերպվել է քննարկում:

Կազմակեպված քննարկմանը չէին ներկայացել ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչները, սակայն պատշաճ ծանուցված էին եղել նիստի

օրվա, ժամի և վայրի մասին: Նիստի ժամանակ «Կոմպասս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներն ամբողջությամբ պնդեցին իրենց կողմից ներկայացված բողոքը, ինչպես նաև հայտնեցին, որ Պատվիրատուի կողմից 29.04.2014թ. հրապարակված պարզաբանմամբ հրավերի տեխնիկական բնութագրում տեղի են ունեցել փոփոխություններ, ուստի Պատվիրատուն պետք է փոփոխեր ընթացակարգի անցկացման ժամկետը:

Կենտրոնի «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացուցիչներին ուղղված այն հարցին, թե արդյոք պարզաբանմամբ հրավերի տեխնիկական բնութագրում կատարվել են փոփոխություններ, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացուցիչները հայտնեցին, որ հրավերի նախնական տեխնիկական բնութագրում և պարզաբանման հրապարակ-ված տեխնիկական բնութագրի միջև առկա են տարբերություններ, և ըստ էության, տեխնիկական բնութագրում կատարվել են փոփոխություններ, սակայն այդ փոփոխությունները էական համարվել չեն կարող: Ուստի բացակայում է որևէ հիմք ընթացակարգի անցկացման ժամկետը փոխելու համար:

Ինչ վերաբերվում է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 09.07.2014թ. N 1/10-07-09 գրությամբ ներկայացրած առարկություններին, ապա վերոհիշյալի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

- «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հայտնել է, որ «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից բողոքը ներկայացվել է որպես ս.թ. հուլիսի 4-ի բողոք, սակայն «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի ընդհանուր բաժնի դրոշմած կնիքից երևում է, որ բողոքը 5272-2 համարի տակ մուտքագրվել է 2014թ. մայիսի 09-ին:

Վերոգրյալի վերաբերյալ հայտնում ենք, որ «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից բողոքը Կենտրոնում մուտքագրվել է 04.07.2014թ., սակայն Կենտրոնի աշխատակցի կողմից վրիպակի հետևանքով հուլիս ամսվա՝ «07»-ի փոխարեն նշվել է մայիս ամիսը՝ «05», որը սակայն վերջինիս կողմից ուղղվել է: Ինչ վերաբերվում է բողոքի մուտքագրման օրվան, ապա հայտնում ենք, որ բողոքի վրա առկա Կենտրոնի ընդհանուր բաժնի դրոշմած կնիքից երևում է, որ այն մուտքագրվել հուլիսի 4-ին, այլ ոչ թե հուլիսի 9-ին: Կենտրոնում «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ստացված բողոքի վերաբերյալ կենտրոնի փաստաթղթերի մուտքի մատյանում կատարվել է գրառում 2014թ. հուլիսի 4-ին:

- «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հայտնել է, որ գնահատող հանձնաժողովը, www.armeps.am կայքի միջոցով 29.04.2014թ. հրապարակելով պարզաբանում, չի

կատարել պահանջվող սարքի տեխնիկական բնութագրերում «էական» փոփոխություններ, պահանջվող ապրանքի փոփոխություն տեղի չի ունեցել և պրոեկտորի փոխարեն, օրինակ՝ սառնարան չի պահանջվել, պահանջվել է նույն անփոփոխ թվային պրոեկտոր:

Վերոգրյալի վերաբերյալ հայտնում ենք, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ընդունել է, որ հրավերի նախնական տեխնիկական բնութագրում և պարզաբանմամբ հրապարակված տեխնիկական բնութագրի միջև առկա են տարբերություններ, և ըստ էության, տեխնիկական բնութագրում կատարվել են փոփոխություններ, սակայն այդ փոփոխությունները էական չի համարել:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 97-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գնման առարկան Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառվելու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում օրենքով նախատեսված Գնումների աջակցման կենտրոնի ղեկավարը հաստատում է գնումների հայտարարության և հրավերի տեքստերը:

Կարգի 109-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ շրջանակային համաձայնագրով նախատեսվում է նաև, որ հայտը ներկայացվում է ծանուցվելու օրվան հաջորդող օրվանից հաշված յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

www.gnumner.am կայքում հրապարակված՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի 2011թ. հունիսի 6-ի թիվ 180-Լ հրամանով հաստատված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերի առաջին մասի (այուհետ՝ Հրավեր) 3.9 կետի համաձայն՝ հրավերում (ծանուցման մեջ) փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից:

Գտնում ենք, որ Պատվիրատուն հրապարակված պարզաբանմամբ վերափոխել է նախապես հրապարակված գնման առարկայի բնութագրում ներառված որոշ պայմաններ՝ սահմանելով գնման առարկայի բնութագրին վերաբերող նոր

պայմաններ, հանելով գնման առարկայի բնութագրին վերաբերող որոշ պայմաններ, ինչպես նաև փոփոխության ենթարկելով արդեն իսկ սահմանված պայմանների մի մասը, ըստ էության փոփոխել է գնման առարկայի բնութագիրը և հրավերը: Ուստի Պատվիրատուն, փոփոխություններ կատարելով ընթացակարգի հրավերում և չսահմանելով հայտերը ներկայացնելու նոր վերջնաժամկետ՝ այն հաշվարկելով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում կատարված փոփոխությունները հրապարակելու օրվանից, այն է՝ 29.04.2014թ.-ից, խախտել է Կարգի 109-րդ կետի 2-րդ ենթակետով և Հրավերի 3.9 կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը՝ առաջարկում ենք «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից 04.07.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ՀՀ պաշտպանության նախարարության կողմից համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-25/14 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար Ռ. Մկրտչյան